

*Likh 80 L0803*

*W/14*

ԹԵՂՎԱՐԺԵ  
ԿԱՐՄԱ  
ԱՅԴԻ ԴՈՒ ԵՍ  
ՄՏՏ ՔԵՐ Բ

---

Հրատարակութ. Յ. Յ. Զ. № 2.

---

891. 71

S - 80

Պ. Խումերէնից

911

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱՀԱՅԱ  
ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

19 NOV 2010

Упр.

ԹԵՐԿԻ ԱՐԺԵ  
Կ Ա Բ Մ Ա  
ԱՅԴ ԳՈՒ ԵՍ  
Մ Տ Ք Ե Պ

Հրատարակութ. Յ. Յ. Ճ. № 2.



## Ф. Финансиране

ՏՊԱՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. ՂԱԶԱՐԵԱՆ ԵԽ Կ. ԱԼԻԵՍԱՆ  
Ա Ա Մ Ա Ր Դ Ա Ն Դ.

# Թ Ա Ն Կ Ա Ր Ժ Ե

Հայ Մովսեսին.

Միջերկրական ծովի ափին, ֆրանսիայի ու  
իտալիայի միջև, մի շատ փոքրիկ իշխանութիւն  
կայ, որ Մօնակո է կոչում։ Այդ իշխանութեան  
բնակիչները մի մեծ զիւղի բնակիչներից ել քիչ  
են, ընդամենը 7 հազար, իսկ հոգն այնքան, որ  
մի հոգուն մեկ զիւղատին ել չի զալիս։ Բայց  
իշխանը արդ իշխանութեան մէջ իսկական իշխան  
է։ Նա ունի արքունիք, մինիստրներ, եպիսկոպոս-  
ներ, գեներալներ, զօրք։

Քիչ է զօրքը, բոլորը 60 մարդ, բայց ե  
այնպէս զօրք է։ Իշխանը եկամուտներ բիշ ունի։  
Հարկեր կան ինչպէս ամեն տեղ, թէ ծխախոտի,  
թէ զինու, թէ օգու, թէ զլիսի, և թէ իսմու ու  
ու ծխում են, բայց ժողովուրդը քիչ է, և իշ-  
խանը չէր կարողանայ կերակրել իր պալատա-  
կաններին, ովաշտօնեաներին ու իրան, եթէ  
մասնաւոր եկամուտ չտնենար։ Իսկ այդ մաս-

նաւոր եկամուտը նա ստանում է խաղատնից — բարետկայից։ Մարդիկ խաղում են, տանում, տարւում, իսկ օգտուողը միշտ խաղատն տէրն է։ Եւ նա այդ եկամտից իշխանին մեծաքանակ փող է վճարում։ Իսկ մեծաքանակ փող նրա համար է տալիս, որ այդ տեսակ խաղատն այժմ ամբողջ Եւրոպայում միայն մէկն է մնացել։ Առաջներում խաղատներ նոյնպէս եղել են և զերմանեական փորբ իշխանութիւնների մէջ, բայց մի քանի տարի առաջ արգելեցին։ Արգելեցին նրա համար, որ այդ խաղատների պատճառով շատ թշուառութիւններ էին տռաջանում։ Գալու էր մէկն ու մէկը, ոկում խաղալ, բախուը չէր բանում, եղած շեղածը վրայ տալիս, նոյն իսկ ուրիշի փողերը, իսկ յետոյ զարդից կամ խեղում էր իրան, կամ զնովականարում։ Գերմանացիները արգելեցին իրանց իշխաններին խաղատներ ունենալը, իսկ Մօնակօյի իշխանին արգելող մարդ չը կայ։ Միայն նրա մօտ է որ մնացել է։

Եւ ահա այդ ժամանակից խաղամուները բոլոր նրան են զնում, նրա մօտ են տանուլ տալիս, իսկ շահը նրանն է։ Արգար աշխատան-

րով շես կարող բարձ պալատներ կառւցանելու Մօնակօյի իշխանն էլ զիտէ, որ զա մի զարշելի գործ է, բայց թէ ինչպէս անէ...։ Ապրել է պէտք։ 2է որ օգուց ու ծխախոտից առնուած հարկավ կերակրուելն էլ զրանից լաւագսնը չէ։ Այդպէս էլ ահա ապրում է իշխանը։ Եշխում է, փող է զիգսամ, և իր արքանիքի մէջ վարում է բոլոր այն կարգն ու կանոնները, ինչպէս ու խկական մեծ թագաւորների արքանիքներումն է։ Նրանց պէս թագավրաւթիւնն է կատարում, հանդիսաւոր ելքեր է սպարում, պարզեներ է բաժանում, պատժում, ներում, ունի պետական խորհուրդ, օրէնքներ, զատաւորներ։ Ամեն բոն այնպէս է, ինչպէս խկական թագաւորներինը։ Միայն թէ ամստեղ ամեն ինչ փոքր է։

Եւ ահա, մի բանի տարի առաջ, այդ իշխանի երկրում մի սպանութիւն տեսի ունեցաւ։ Իշխանութեան բնակիչները հանդարտարարով մարդիկ են, և այգովէս բան չէր պատճել առաջներում։ Հաւաքուեցին, ինչպէս վայել էր, զատաւորներ, զատաւազազներ, երգուեաներ, փատաւարաններ, և սկսեցին դատել, ինչպէս հարկն էր։ Դատեցին և օրէնքների համաձայն վճռեցին

յանցաւորի զլուխը կտրել։ Լաւ։ Դատավճիռը  
ներկայացրին իշխանին։ Կարդաց իշխանը և  
հաստակեց Գլխատել է պէտք, զլխատել։ Բայց  
ցան այն է, որ նրանք զլուխ կտրելու ոչ մերե-  
նայ ունեն, ոչ էլ գահին։ Մտածեցին, մտածե-  
ցին մինիստրները և որոշեցին ֆրանսիական  
կառավարութեան զրել, իմանալու թէ արդեօք  
ֆրանսիացիք կարող են առժամանակ իրանց  
ուղարկել զլխատման մերենան, վարսկեսն էլ  
հետը, և տեղեկացնեն՝ թէ որքան ծախս կը  
նստի այդ բոլորը։ Ուղարկեցին թուղթը։ Մի  
շաբաթից պատասխան են ստանում, մերենան  
ու դահճին ուղարկել կարելի է, այդ բոլորի  
ծախսն է 16,000 ֆրանկ։ Զեկուցին իշխանին։  
Մտածեց իշխանը — 16,000 ֆրանկ։  
Անպիտանը շարժէ, ասում է, այդքան փող։  
Աւելի աժան չէ կարելի արդեօք, 16,000 ֆր.  
ախոր այդ նշանակում է երկու ֆրանկից աւելի  
նոր հարկ բեռցնել ամեն մի բնակչի վրայ։ Դա  
նրանց ծանր կը թուի։ Մէկ էլ տեսնես, խռովու-  
թին կը յարուցանին։ Խորհրդի հաւաքուեցին,  
թէ ինչպէս զսրծ աջողացնեն։ Որոշեցին մին-  
նոյն խնդիրով դիմել Բառական թագաւորին։

Ֆրանսիական կտռավարութիւնը համբավետա-  
կան է, թագաւոր, իշխան չէ յարգում, իսկ  
իտալական թագաւորը վերջապէս եղբայրակից  
է, անշուշտ աւելի աժան կը վերցնէ։ Գրեցին։  
Շուտով պատասխան են ստանում։ Իտալական  
կառավարութիւնը զրում է, որ մեքենան էլ,  
վարպետին էլ կուպարկին ամենայն աւրախու-  
թեամբ։ Իսկ այդ բոլոր, ճանապարհածախոսով  
համուրած, կարժենայ 12,000 ֆրանկ։ Աւելի  
աժան է, բայց և այնպէս թանկ է։ Անզգամը  
զարձեալ այդքան փող չարժէ։ Դուքս է գալիս,  
որ նորից երկու ֆրանկից պակաս հարկ պէտք  
է նշանակել մարդագույն։ Կրկին խորհրդի  
նստեցին։ Երկար բարակ մտածում էին, արդեօք  
աւելի աժան չէ կարելի։ Զինուորներից մէկն  
ու մէկը արդեօք յանձն չի առնի անավարի  
կերպով այն մարդու զլուխը կարելու։ Միենայն  
է, չի որ պատերազմում սպանում են։ Հինգ այդ  
բանի համար էլ պատրաստում են զինուորներին։  
Խօսեց զինուերալը նրանց հատ, թէ, ով յանձն  
կառնե։ Զինուորները յանձն շառան։ Աշ, ասում  
են, մնեք այդ բանը չենք կարող և չենք սովո-  
րիլ։ Բ'նչ անել հապա։ Նորից միտք արեցին,

միտք արեցին, կազմեցին կօմիտէ, մասնաժողով, ևնթամասնաժողով։ Փոխեցին իրանց միտքը։ Պէտք է, առում են, մահուան պատիժը մշտնջենական բանտարկութեան փոխարինել։ Թէ գթասրտութիւն ցոյց տուած կը լինի իշխանը, թէ ծախսերը ըիշ կը լինեն։ Համաձայնեց իշխանը, և այդպէս էլ վճռեցին։ Բայց հիմա էլ ուրիշ ցաւ. յատուկ այնպիսի բանտ չը կայ, ուր փակին մշտապէս։ Կան փոքրիկ խուցեր, ուր նստացնում են առժամանակ, իսկ հաստատոն բանտ, մշտապէս այնտեղ փակելու համար, չը կայ այդպիսին։ Բայց և այնպէս մի տեղ ճարեցին։ Նստացրին յանցաւորին ու մի պահապան կանգնեցրին։

Պահապանը թէ հոկում էր և թէ զնում իշխանական խոհանոցից ոճրագործի համար ուտելիք բերում։ Նստեց այդպէս վեց ամիս, մի առի։ Իշխանը տարուայ վերջին սկսեց իր ելքն ու մուտքը աշքէ անցկացնել, տեսնում է որ ոճրագործի պահապանութեան համար նոր ծախս է բացուել, այն էլ ոչ այնքան թիշ։ Յատուկ պահապան և ուտելիք։ Տարին 600 ֆր. էր նստում։ Իսկ անզգամը երխուասարգ է, առողջ,

կարող է յիսուն տարի ապրել։ Հաշումիր տես, թէ նրբան ծախս է լինելու։ Ըստ մեծ։ Այլպէս չէ կարելի։ Կանչեց իշխանը մինիստրներին։ «Մի լաւ խորհեցր, առում է, ինչպէս անենիր, որ այդ անսպիտանի ծախսը պահատացնենիր, թէ չէ այլպէս նա շատ թանկ է նստելու մեր։ Հաւաքուեցին մինիստրները, միտք են անում։ Մէկի առում է, «Ահա ինչ, պարսներ, ըստ իր պահապանին սիէտը է արձակել։ Մի ուրիշն առում է, «Բայց նա կը փախչի»։ — «Կը փախչի, թուզ փախչի»։ Զեկուցին իշխանին, համաձայնից Արձակեցին պահապանին։ Նայում են թէ ինչ է լինելու։ Այն են տեսնում, որ ճաշի ժամանակը համեմելուն, դուրս եկաւ յանցաւորը, վնարեց պահապանին, չը գտաւ և զնաց իշխանի խոհանոցը իրա համար ճաշ բերելու։ Վերցրից, ինչ որ տախն, վերապարձաւ բանտ, փակեց վրայից զուռը ու հստեց։ Հետեւ օրը նայնպէս, իրա համար կիրակուր բերելու զնում էր, իսկ փախչել չէր փախչում։ Ի՞նչպէս անել, Մտածեցին։ Պէտք է, առում են, նրան ուզգակի յայտնել, որ նոր մեղ հարկաւոր չէ։ Թաղ հեռաւոյ, էաւ։ Կանչում է նրան իր մօտ արդարա-

դատութեան մինիստրը և տառմ. «Ինչու դուք չեք հեռանում: Պահապան չը կար ձեզ վրայ: Կարսղ էք ապատ դնալ և իշխանը չի նեղանար»: «Իշխանը չի նեղանայ, բայց ես գնալու տեղ չունեմ: Ուր գնամ: Գուք ինձ անուանար կեցիք ձեր դատավճռով. ոչ ոք այժմ ինձ չի վերցնի, ես ամեն զսրծից յետ եմ մնացել: Գուք ինձ հետ անկանոն վարուեցիք: Այդպիսի վարմոնքը ոչ մի բանի պէտք չի գայ: Ինձ մահուան դատապարտեցիք, լաւ: Գուք ողջոք էք ոք ինձ զլիսատէիք, չը զլիսատեցիք: Այդ մէկ: Ես գրա պէմ բան չառացի: Յետոյ գուք ինձ դատապարտեցիք մշտնչեական բանտարկութեան ու պահապան կանգնեցրիք, որ ինձ կերակուր բերէք, յետոյ խլեցիք ինձանից պահապանին: Այդ երկու: Ես դարձեալ չը հակածառեցի: Այժմ էլ տառմ էք. հեռացիք: Ո՞չ գուք ինչ ուզում էք անէք, ես ոչ մի տեղ չեմ գնայ: Արի ու էշը ցեխորց հանիբը: Կրկին խորհուրդ գումարեցին: Բառ ինչ անիլ: Զէ հեռանում: Երկար բարակ մտածեցին: Գէտք է նրան կենսաթոշակ նշանակել: Առանց գրան նա իրանցից ձեռք վերցնողը չէ: Յայտնեցին իշխա-

նին: Ուրիշ բան չէ մնում անել, պէտք է նրանից մի կերպ ապատուել: Նշանակեցին 600 գրանիկ: Յայտաբարեցին նրան. «Թէ, լաւ, տառմ է, եթէ ճշգութեամբ վճարելու էք, ինչու չէ, կը հեռանամ»:

Այդպէս էլ վճռեցին: Նա փողը կանխիկ ստացաւ, մնար բարով ասաց բոլորին և իշխանութեան սահմաններից գուրս եկաւ: Ընդամենը քառորդ ժամուայ ճանապարհ է երկաթուղով: Գուրս եկաւ, ընակութին հաստատեց մօտակայքում, հող գնեց, բանջարանոց, պարտէզ մշակեց, և ապրում է իր քէֆին:

Ժամանակին զնում է կենսաթոշակին ստանալու: Ստանում մտնում է խազատուն, երկու երեք գրանիկով բախտը փորձում, երբեմն տանում է, երբեմն տարւում, և զնում է տոն: Ապրում է հանգիստ ու խաղաղ:

Լաւ ոք այդ փորձանքը նրան այնտեղ չը պատահեց, որտեղ վող չեն խնայում ոչ մարդու զլուխ կտրելու, ոչ էլ մշտական բանտերի համար:



Ч У Р У У\*)

*Ugqjhkrkjhq.*

Սոյն թարգմանութիւնը տպաւած էր մի ամսագրում՝ I. Տօլստոյի հիանալու նամակով, հրատարակչին ուղղած։ «Ուզարկում եմ ձեզ ամերիկան։ Open Court համությունը իմ թարգմանած հեքեաթը «Կարոն» վերապրուի։ Չատ հաւանիցի այդ հեքեաթին թէ իր պարզամտութեան, թէ իր

\*) Կարման՝ բռնպայտված մի հաւասարիք է, որ կայսերում է այն բանում, թե  
ինքանունիցը մարդու բնաւորութեան ոչ  
միայն յօրինուածքը, այլ եւ ամբող ձևակա-  
տագիրը այս կեանինում՝ իր նախարարաց  
կեանինի արտարմունքի հետեւանին է, եւ թե  
մեր ապագայ կեանինի շարք ու բարին ձիջը  
նոյնապէս կախումն էն ունենալու այն ձիգե-  
րից, որ մենին արել ենին այս կեանինում շարից  
իուսափելու եւ բարի զործելու:

*Unusquisque in omnibus si videt in omnibus I. et II. L. 8.*

խորութեան համար։ Յատկապէս սիրան է նրանում պարզաբանումը՝ վերջերս յաճախ զանագան կողմերից պղտորուած այն ճշմարտութեան, թէ չարից ապատուելն ու բարիք ձեռք բերելը սեփական ճիկով է միայն ստացուում, թէ չը կայ ու չէ կարող լինել այնպիսի մի եզանակ, որի միջոցով անհական կենանքից գույքս, հնարաւոր լինէր հատնել սեփական կամ ընդհանուր բարորութեան։ Այդ լուսաբանութիւնը լաւ է մանաւանդ նկանով, որ հէնց այդտեղ էլ ցոյց է տրւում և այն, թէ առանձին մարդու բարօրութիւնը այն ժամանակ է միայն իսկական բարիք, երբ նա ընդհանուրի բարօրութիւն է։ Հէնց որ աւագակը, դժոխրից գուրս գալիս, միայն իրան բարիք ցանկացաւ, իսկոյն նրա բարիքը գագարից լինելուց և նա վայր գլորուեց։ Այդ հերեաթը կարծիս մի նոր կողմից է լուսաբանում ըրիստոնէութիւնից յայտնուած երկու հիմնական ճշմարտութիւններ այսինքն թէ՝ կեանքը անձնական կամ անձնական կամ անձնական բարօրութիւններ միայն մկան ու իր անձը կը կորցնէ, կը գտնէ այն և թէ մարդկանց բարօրութիւնը միայն նրանց միութեան մէջն է Սոտծու հետ և Սոտծու միջոցով

իրար հետ. Ինչպէս Դու իմ մէջ և ես Քո մէջ, նոյնպէս և նրանք Մեր մէջ մի լինեն...։ Յովհ. Ժէ. 21։

«Ես կարդում էի այդ հերեաթը երեխաներին, և նրանց զուր էր զալիս։ Մեծերի մէջ էլ՝ նրան ընթերցումից յետոյ՝ միշտ խօսակցութիւն էր բացւում կեանքի ամենակարեոր հարցերի վրայ։ Եւ ինձ թւում է, որ զա մի շատ լաւ յանձնարարական է։

L. Տօլսոյ.

Բրտոմինական գասակարպից մի հարուստ ակնագործ, Պանդու անունով, իր ծառալի հետ զնում էր Բենարէս: Համեմալ ճանապարհին մի պատկառելի տեսքով վանականի, որ զնում էր նոյն ուղղութեամբ, նա մտածեց. «Այդ վանականը ազնիւ ու սուրբ տեսք ո՞նի: Լաւ մարդկանց հետ յարաբերութիւնը բախտաւորութիւն է բերում. եթէ նա էլ է Բենարէս զնում, ևս նրան կը հրաւիրեմ ինձ հետ վնալ իմ կառքով»: Եւ, բարեկով վանականին, հարցրեց թէ աւը է զնում, և խմանալով որ վանականն էլ, որի անունը Նարագա էր, զնում է նոյնպէս Բենարէս, հրաւիրեց նրան իր կառքը:

— Ճնորհակալ եմ ձեր բարեսրութեան համար, — ասաց վանականը բրամինին, — ևս արդարի շատ եմ յօվնած երկարատե ճամբարդութիւնից: Սեփական ոչինչ շունենալով՝ ես չեմ կարող վարձատրել ձեզ փոստի, բայց գուցէ պատահի, որ ես կարող լինեմ ձեզ հատուցանել հոգեկան մի որ և է զանձ գիտութեան այն գանձարանից, որ ես ձեռք եմ բերել, հետեւ լով մարդկութեան ուսուցիչ երանելի մեծ Բուգդայի՝ Սակիտ Մունիի վարդապետութեան:

Նրանիր զնում էին միասին, և Պանդուն բաւականութեամբ լսում էր ճանապարհին նարագալի հրահանգիշ խօսքերը: Մի ժամից նրանիր մօտեցան մի տեղի, ուր ճանապարհը երկու կողմից փշացել էր հեղեղից և մի հոգագործի կոտրուած ակով սայլը փակում էր ուղին:

Սայլի տէրը, Դեւալան, զնում էր Բենարէս իր բրինձը ծախելու, և շտապում էր այնտեղ համնել հետիւնալ օրուայ արշալոյսից առաջ: Եթէ նա ուշանար, բրինձ առնողները կարող էին արդէն քաղաքից հեռանալ, զնած լինելով ինչքան բրինձ որ հարկաւոր էր իրանց:

Երբ ակնագործը տեսաւ, որ ճանապարհը շարունակել չէ կարող, եթէ երկրագործի սայլը ակողից գուրս չը բերուի, բարկացաւ և իր ստրոկ Մագագութային հրամայեց սայլը մի կողմ քաշել, որ կառը կարողանար անցնել: Հոգագործը հակառակուեց, որովհետեւ նրա սայլը դարափոսին այնքան մօտ էր ընկած, որ կարող էր ցրիւ զալ, եթէ նրան ձեռք տային, բայց բրամինը շուղեց լսել հոգագործին և հրամայեց եր ծառային՝ հեռու շպտել բրինձով բեռցուած սայլը: Մագագութան, արտակարգ ոյժի տէր

մի մարդ, ուրիշներին վիրաւորանք հասցնելու  
մէջ բաւականութիւն գտնող, հնագանդեց, նախ  
քան վանականը կարող կը լինէր միջամտելու, և  
դէն շպլտեց սայլը: Երբ Պանդուն անցաւ և  
ռւզում էր չարունակել ճանապարհը, վանականը  
դուրս ցատկեց նրա կառքից ու ասաց:

— Ներեցէր ինձ, պարմի, որ ես ձեզ թուղում  
եմ: Ծնորհակալ եմ, որ գուք բարեսիրաբար թոյլ-  
ատրեցիք ինձ մի ժամ ճանապարհ վնալ ձեր  
կառող: Ես չափաղանց յազնած էի, երբ գուք  
ինձ նստացրիք, բայց այժմ, ձեր սիրալիութեան  
չնորհիւ, ես հանգստացել եմ: Իսկ այդ հողա-  
գործի մէջ ճանաչելով ձեր նախահայրերից մէկի  
մարմնացումը, ես ոչ մի աւելի լաւ բանով շեմ  
կարող ձեզ վարձատրել ձեր բարութեան համար,  
քան նրանով, որ օգնեմ այդ հողագործին իւ  
դժբախտութեան մէջ:

Բրամինը զարմանքավ նայեց վանականին:

— Գուք ասում էր, որ այդ հողագործը իս  
նախահայրերից մէկի մարմնացումն է. այդ չէ  
կարող լինել:

— Ես զիտեմ, — պատասխանեց վանականը,  
— որ ձեզ անյայտ են այն բարդ ու նշանակելի

կապերը, որոնք կապում են ձեզ հողագործի ճակա-  
տագրի հետ: Յայց կոյրից չէ կարելի սպասել, որ  
նա տեսնէ, ուստի ցաւում եմ, որ գուք ինքներու  
էր ձեզ վնասում, և կը ջանամ պաշտպանել ձեռ  
այն վէրբերից, որ գուք պատրաստում էր ձեզ  
հասցնելու:

Հարուստ վաճառականը սովոր չէր, որ իրան  
պարսաւէին. զգալով որ վանականի խօսքերը՝  
թէի մեծ բարութեամբ արտարերուած՝ բովան-  
դակում էին յանդիմանութիւն, նա հրամայեց  
ծառային կառքը առաջ քշել:

Վանականը ողջունեց հողագործ Դեւալային  
և սկսեց օգնել նրան սայլը նորոգելու և թափ-  
ուած բըինձը ժողովելու: Գործը արագ էր  
ընթանում, և Դեւալան մտածեց.

«Եյս վանականը պէտք է որ սուպը մարդ  
լինի. Նրան կածես թէ օգնում են անտեսանելի  
ովիները: Հարցնեմ նրան, թէ ես ինչո՞վ արժա-  
նացայ հողարտ բրամինի վայրագ վերաբերմուն-  
քին:»

Եւ նա հարցրեց.

— Յարգելի պարմ, գուք չէք կարող ինձ  
առել՝ թէ ինչո՞ւ անիրաւութիւն կրեցի ես այն մար-

գուց, որին երբէք ոչ մի վատութիւն չեմ արել:  
Վանականն ասաց.

— Սիրելի բարեկամ, զուք անիրաւութիւն  
շը կրեցիք, այլ միայն ներկայ գոյութեան մէջ  
կրեցիք այն, ինչ որ դուք առաջուայ կեանքում  
գործել էիք այդ բրամինին: Եւ ևս չեմ սխալուի,  
եթէ ասեմ, որ նոյն խալ այժմ էլ զուք բրա-  
մինին կանէիք նոյն բանը, ինչ որ նա ձեղ արեց,  
եթէ նրա տեղը լինէիք և ունենայիք նոյնպիսի  
ուժեղ ծառայ:

Հողակործը լսոստվանեց, որ եթէ նա  
իշխանութիւն ունենար, չեր գլշայ իր ճանա-  
պարհը փակող մի ուրիշ մարդու հետ վարժուելով  
այնպէս ինչպէս բրամինը վարուեց իրա հետ:

Բրինձը ժողոված էին սայլի մէջ, և վանա-  
կանն ու հողակործը մօտենում էին արդէն  
բենաբէսին, երբ ձին յանկարծ մի կողմ նետուեց:

— Օ՞ձ, օ՞ձ, — բացականիշեց հողակործը:

Բայց վանականը, ուշադիր նայելով առար-  
կային, որ վախեցրել էր ձիուն, ցած թռաւ  
սայլից ու տեսաւ, որ մի քսակ էր, սոկով լի:

« Զարուստ ակնագործից դատ ուրիշ ոչ ոք  
չէր կարող կորցնել այս քսակը», մտածեց նա,

և վերցնելով քսակը՝ տուեց հողակործին, ասելով.  
— Առէք այս քսակը, և երբ Բենաբէսում  
կը լինէք, գնացիք այն հիւրանոցը, որ ևս ցոյց  
կը տամ, հարցրէք բրամին Պանդու և քսակը  
նրան յահճնեցէք: Նա պիտի ձեզնից ներողու-  
թիւն խնդրէ իր կոպիտ վարմունքի համար,  
բայց դուք ասացէք, որ ներել էք նրան ու  
ցանկանում էք յաջողութիւն նրա բոլոր ձեռ-  
նաբկութիւններին, որովհետեւ, հաւասացէք ինձ,  
որքան աւելի լինեն նրա յաջողութիւնները,  
այնքան աւելի լաւ կը լինի այդ ձեղ համար:  
Չեր բախտը շատ լանում կախուած է նրա  
բախտից: Եթէ Պանդուն ձեզնից բացատրու-  
թիւն խնդրէ, նրան ուղարկեցէք վանք, ուր  
նա միշտ ինձ պատրաստ կը գտնէ օգնելու  
նրան խորհրդավ, եթէ պէտք ունենայ:

Մինչ այդ, Պանդուն եկաւ Բենաբէս և  
հանդիպեց իր առեւտրական բարեկամ՝ հարուստ  
զրամատէր Մալմելային:

— Ես կորած եմ, — ասաց Մալմեկան, — և  
ոչ մի զործ չեմ կարող անել, եթէ այսօր և եթ  
արքայական խոհանոցի համար մի սայլ ամենալաւ  
բրինձ շը զիեմ: Բենաբէսում ինձ թշնամի մի

դրամատէր կայ, որը, իմանալով թէ ես պալատական վերակացուի հետ պայմանաւորուել եմ այսօր առաւտեան մի սայլ բրինձ հասցնել նրան, ինձ կորսուեան մատնելու ցանկութեամբ՝ զնել է ինչքան բրինձ որ կայ Բենարէսում։ Վերակացուն չի ազատի ինձ պայմանից, և վաղը ես կորած եմ, եթէ Կրիշնան ինձ երկնքից մի հրեշտակ չուզարկէ։

Երբ Մարմեկան գանգատուում էր իր անբախտութեան վրայ, Պանդուն իր քսակն էր որոնում։ Կառքի մէջ վնտուելով ու չը գտնելով, նա կասկածեց իր ստրուկ Մազադութայի վրայ, ստոիկաններ կանչեց, մեղադիքեց նրան և հրամայելով կապել՝ վայրագումն տանջում էր նրան, խոստովանութիւն կորդելու համար։ Ստրուկը գտուում էր տառապաղին։

— Ես մեղաւոր չեմ, բաց թողէք ինձ։ Ես չեմ կառաղ տանել այս չարչարանքները։ Ես բոլորովին անմեղ եմ այդ յանցանքի մէջ և այժմ տառապում եմ ուրիշների մեղքի համար։ Օ՛, եթէ կարողանայի ներում իննդրել այն հողագործից, որին ես շարիք գործեցի իմ տիրոջ համար։ Եյս տանշանքները, երիի, իմ խոստախութեան

պատիմն են։

Երբ գեռ սոտիկանները շարունակում էին ծեծել ստրուկին, հողագործը մօտեցաւ և ի միծ զարմացումն ամեների՝ տուեց քսակը։ Ստրուկին խկոյն ազատեցին տանջողների ձեռքից, բայց իր տիրոջից զժզո՞ն լինելով, նա փախաւ նրանից ու միացաւ աւազակների խմբին, որոնք ապրում էին լեռներում։ Մալմեկան էլ, երբ լսեց թէ հողագործը կարող է ծախել ամենալաւ տեսակի բրինձ, արքայական սեղանին պէտքական, խկոյն զնեց ամբողջ բեռը երեք անգամ աւելի զնով, իսկ Պանդուն, փողերի վերադառնով ուրախացած, խկոյն վանք շտապեց, ստանալու համար վանականից այն բացատրութիւնները, որ նա խոստացել էր։

Նարագան ասաց.

— Ես ձեզ կարող էի բացատրութիւն տալ, բայց զիտենալով որ զուր անընդունակ էր հասկանալու հոգեկան ճշմարտութիւնը, ես գերագասում եմ լուռթիւնը։ Մակայն ես ձեզ մի ընդհանուր խորհուրդ կը տամ։ վարուեցէր իւրաքանչիւր մարդու հետ, որին կը հանդիպէր, այնպէս, ինչպէս ինքներդ ձեզ հետ, ծառայե-

ցէք նրան այնպէս՝ ինչպէս զուք կը ցանկանա-  
լիք, որ ձեզ ծառայէին։ Երպախտով զուք կը  
ցանէք բարի զործերի սերմեր, և նրանց առատ  
հունձը ձեղինից չի անցնի։

— Ավ վանական, տուէք ինձ բացատրու-  
թիւն, — ասաց Պանդուն, — և ինձ հեշտ կը լինի  
այն ժամանակ ձեր խորհրդին հետեւ։

Եւ վանականն առաց.

— Լսեցէք ուրեմն, ես ձեզ կը տամ զազտ-  
նիքի բանալին. եթէ չը հասկանաք եւ այդ  
զազտնիքը, հաւատացէք այն բանին, ինչ որ ձեզ  
ասելու եմ. Պատրանք է իր անձը իբրև մի  
առանձին էտթիւն համարելը, և ով որ իր  
խելքն ուզգում է այն բանին, որպէսզի կատարէ  
այդ առանձին էտթեան կամքը, հետեւմ է  
կեղծ լոյսի, որ նրան կառաջնորդէ մեղքի ան-  
դունդը։ Այն, որ մենք մեզ առանձին էակներ  
ենք համարում, նրանից է առաջ զալիս, որ  
Մայեայի քովք կուրացնում է մեր աշքերը ու  
մեզ խանդարում է տեսնելու անխզելի կատը  
մեր մերձաւորների հետ, խանդարում է մեզ  
հետառելու մեր միութեան ուրիշ էակների  
հոգիների հետ։ Քիչերը զիտեն այդ ճշմարտու-

թիւնը։ Թող հետեւեալ խօսքերը լինեն ձեր  
թալիսմանը։

«Ով որ ուրիշներին վնասում է, իրան է  
շար զործում։

«Ով որ ուրիշներին օգնում է, իրան է բարի  
զործում։

«Գագարիցէք համարելու լինքներդ ձեզ  
իբրև առանձին էտթիւն, և զուք ճշմարտու-  
թեան ճանապարհի վրայ ոտ կը գնէր»։

Այս մարդու համար, որի տեսութիւնը  
մթափնած է Մայեայի քովով, ամբողջ աշխարհը  
կտրատուած է թւում անհամար անձերի։ Եւ  
այզպիսի մարդը չէ կարող ըմբռնել նշանակու-  
թիւնը համապարփակ սիրայ դէպի բոլոր կեն-  
դանի էակները։

Պանդոն պատասխանեց.

— Եեր խօսքերը, յարկամեծար պարան,  
խորին նշանակութիւն ունեն, և ես միտս կը  
պահիմ։ Ես մի փոքրիկ բարութիւն արեցի, որ  
ինձ ոչինչ չէր արժի, մի խեղճ վանականի հա-  
մար՝ իմ ճամբորդութեան միջոցին դէպի Բենա-  
րէս, և ահա որքան բարերար հետեանըներ ունե-  
ցաւ այն։ Ես շատ բան եմ ձեզ պարտական։

սրովհետև առանց ձեզ ոչ միայն իմ բարկը կը կորցնէի, այլ և չէի կարողանայ Բենարէսում անել այն առեւտրական գործերը, որոնք մեծ շափով աւելացրել են իմ կարողութիւնը։ Բայց այդ, ձեր հոգատարութիւնն ու բրիճակի սայլի գալուստը նպաստեցին իմ բարեկամ Մալինկայի բարեկեցութեան։ Եթէ բոլոր մարդիկ ձեր կանոնների ճշմարտութիւնը ճանաչէին, որքան կը լրացնար մեր աշխարհը, որքան կը պակասէր նրանում շարը և կը բարձրանար ընդհանուր բարօրութիւնը։ Ես կը ցանկանայի, որ Յուղդայի ճշմարտութիւնը հասկացուէր ամենքից, ուստի ես ուզում եմ իմ ծննդավայր Կոլշամբիում մի վանք հիմնել և ձեզ հրաւիրում եմ այցելել ինձ, որպէս զի ես կարողանամ ընծայաբերել այդ վայրը Բուգդայի աշակերտների եղբայրութեան համար։

Անցան տարիներ, և Պահպատի հիմնած Կոլշամբի վանքը եղաւ իմաստուն վահականների հաւաքատեղի և յայտնի դարձաւ որպէս յուստորութեան կենդրոն ժողովրդի համար։

Այդ միջոցին հարեան թագաւորը, լսելով Պահպատի պատրաստած զարգերի գեղեցկութեան

մասին, իր գանձարկեալին ուզարկեց նրա մօտ, մաքուր ոսկուց մի թագ պատուիրելու համար, չնդկաստանի ամենաթանկարկին բարերով զարդարուած։

Երբ Պահպատն վերջացրեց այդ աշխատութիւնը, ճանապարհ ընկաւ գէպի թագաւորի մայրագագարը, և յուսալով այնտեղ առեւտրական գործեր անել, հետը վերցրեց ոսկու մեծ պաշար։ Նրա թանկարկին իրեղինները տանող կարաւանը պահպանուած էր գինուած մարդկանցով. բայց երբ նա լեռներին հասաւ, աւաղակեները, Մագաղութայի առաջնորդութեամբ, որ նրանց պետն էր դարձել, յարձակուեցին նրա վրայ, կտառեցին պահպաններին և խլեցին բոլոր թանկարժէր քարերն ու ոսկին։ Ինքը Պահպատն հազիւ օձիքն ազատեց։ Այդ անբախտութիւնը մի մեծ հարուած էր Պահպատի բարեկեցութեանը. նրա հարստութիւնը մեծապէս պակասեց։

Պահպատն խիստ էր վշտացած, բայց տանում էր իր գժբախտութիւնը առանց տրտունչի. նա մտածում էր. «Ես արժանացայ այդ կորուստներին այն մեղքերի համար, որ գործել եմ իմ

առաջուայ կեանքում: Ես անողորմ էի ժողովրդի  
հետ երիտասարդութեանս ժամանակ. և եթէ  
այժմ քաղում իմ խմ գատ զործերի պատունիրը,  
ապա ուրեմն չէ կարելի ինձ զանգատուել:

Որովհետեւ նա դարձաւ շատ աւելի բարի  
գէպի բոլոր էակնիրը, ուստի և նրան հասած  
դժբախտութիւննիրը ծառայեցին միայն նրա  
սրտի մարբագործումին:

Կրկին անցան տարիներ, և պատահեց, որ  
նարագայի աշակերտ երիտասարդ վահական  
Պահտական, ճամբորդելով Կօլշամբի սարելում,  
ընկաւ աւազակների ձեռքը: Որովհետեւ ոչինչ  
չունել, աւազակասկալ խիստ ծեծի ենթարկեց  
նրան ու բաց թողեց:

Հետեւեալ առաւօտ Պահտական, անտառի  
միջով զնալիս, լսեց կռուի ձայն և մօտենալով  
տեսաւ շատ աւազակներ, որոնք կատարութեամբ  
յարձակում էին իրանց զլխաւորի՝ Մազագու-  
թայի վրա:

Մազագութան, ինչպէս առիւծը շրջապատ-  
ուած չներով, պաշտպանում էր և սպանեց նրան-  
ցից շատերին: Բայց նրա թշնամիները բազմա-  
թիւ էին, վերջում նա յազդուեց ու մահամերձ

ընկաւ, վերբերով ծածկուած:

Աւազակները հեռացան թէ չէ, երիտասարդ  
վահականն մօտեցաւ ընկածներին, ցանկանալով  
վիրաւորներին օգնութիւն հասցնել: Բայց աւա-  
զակները արդէն մեռել էին, միայն նրանց զրո-  
խաւորի մօտ մնացել էր մի քիչ կեանք: Վա-  
նականը իսկոյն գէպի տառակին ուղղուեց, որ  
հոսում էր քիչ հեռուն, ջուր բերեց ու մատու-  
ցեց մեռնողին:

Մազագութան բաց արեց աշքերը և տտամ-  
ները կրծտացնելով տասց.

— Ո՞ւր են այն ապերախտ չները, որոնց  
ես այնքան անգամ յալլութեան ու յաջողու-  
թեան եմ առաջնորդել: Առանց ինձ նրանք  
շուտով կը կորչեն, ինչպէս որսորդի չներով  
հալածուած չնազայիրը:

— Մի մտածէք ձեր ընկերների ու ձեր  
մեղաստ կանքի մասնակիցների վրա, — ասաց  
Պահտական, — այլ մտածեցէք ձեր հոգու մասին  
և օգտուցէք վերջին ժաման վրեկութեան այն  
կարելիութիւնից, որ ձեզ ներկայանում է: Ահա  
ձեզ խմելու ջուր, տուէք կապեմ ձեր վերքերը:  
Գուցէ ինձ յաջողուի վրկել ձեր կեանքը:

— Անօպուտ է այդ, — պատասխանեց Մադակովթան, — ևս գատապարտուած եմ. անպիտանները վիրաւորեցին ինձ մտհացու կերպով: Անչորհապարտ անզգամներ: Նրանք ինձ խփում էին այն հարուածներով, որ ես նրանց սովորեցրել էի:

— Դուք հնձում էք այն, ինչ որ ցանել էք, — շարունակեց վանականը: — Եթէ դուք ձեր ընկերներին սովորեցրած լինէիք բարութեան գործեր, նրանցից էլ կատանայիք բարի արարքներ: Բայց դուք նրանց սովորեցրել էք սպանութեան, որով և դուք ձեր գործերի չնորդիւ սպանուեցիք նրանց ձեռքով:

— Զեր ասածը ճշմարիտ է, — պատասխանեց աւազակապիտը. — Ես արժանի էի այս վիճակին, բայց որբան գառն է իմ բախտը նրանով, որ ես պէտք է բոլոր իմ վատ գործերի պատուղը քաղեմ ասպարայ գոյութիւններիս մէջ: Ուսուցէք ինձ, սուրբ հայր, ինչ կարող եմ անել իմ կեանքը մեղքերից թեթեացներու համար, որոնք ճնշում են ինձ ինչպէս ժայռը, կրծքիս վրայ տապարտած:

Պանտական ասաց.

— Արմատախիլ արէք ձեր մեղաւոց ցանկութիւնները, ոչնչացրէք չար կրքերը և լցրէք ձեր հոգին բարութեամբ գէպի բոլոր էակները:

Աւազակապետն ասաց.

— Ես շատ չարիք էի անում և բարիք չէի գործում: Ի՞նչպէս կարող եմ դուրս պրծնել վշտի այն ցանցից, որ ես հիւսել եմ իմ որտի շար ցանկութիւններից: Եմ Կարման ինձ գժոնիք կը տանէ, ես երբէք չը պիտի կարողանամ զուրս կալ վրկութեան ճանապարհի վրայ:

Եւ վանականն ասաց.

— Այս, ձեր Կարման կը քաղէ տպազայ մարմնացումների մէջ ձեր ցանած սերմերի պտուղները: Վատ գործողի համար ազատում չը կայ իր վատ արարքների հետեանքներից: Բայց մի վհատուէք, տմեն մարդ կարող է վրկուել, բայց այն պայմանով միայն, որ նա արմատախիլ անէ իրանից անհնականութեան մոլորութիւնը: Դրան երբեւ օրինակ, ես ձեզ կը պատմեմ մեծ աւազակ Կանգաթալի պատմութիւնը, որ մեռաւ անզըզում և նորից ճնշուեց իրրե սատանայ գժոխքում, որտեղ նա տանջում էր իր վատ արարքների համար ամենասոսկալի տառապանիքներով:

Նա դժոխումն էր արգէս շատ տարիներ և չէր կարողանում ադատուել իր աղէտալի կացութիւնից, երբ Բուդգան յայտնուեց երկրում՝ հասաւ լուսապայծառութեան երանելի վիճակին։ Այդ արժանայիշատակ ժամանակին՝ լոյսի մի ճառագայթ էլ ընկաւ դժոխքը, յարուցանելով բոլոր դեերի մէջ կետնք և յոյս, և աւագակ Կանդաթան բարձրածայն աղաղակեց. «Ո՞վ երանելի Բուդգա, խզճ ինձ։ Ես սոսկալի կերպով տառապում եմ։ թէն չարիք էի գործում, այժմ ես ցանկանում եմ գնալ արդարութեան ճանապարհով։ Բայց ես չեմ կարողանում վշտի ցանցից գուրս պլծնել. օգնիր ինձ, Տէր, գթա ինձ։» Կարմայի օրէնքներն այնպէս են, որ չար գործերը դէպի կորուստ են տանում։

Երբ Բուդգան լսեց դժոխում տառապող դեի աղերսը, ուզարկեց նրան մի սարդ իր ոստայնով, և սարդն ասաց. «Բոնիր իմ ոստայնից և բարձրացիր նրա վրայով դժոխից գուրս։» Երբ սարդը տեսութիւնից անհետացաւ, Կանդաթան բռնեց ոստայնից ու մկնեց նրանով բարձրանալ։ Ոստայնը այնքան ամուր էր, որ չէր կտրում, և նա նրա վրայ միշտ վեր ու վեր

էր բարձրանում։ Յանկարծ զզաց, որ թե՛ն մկնեց դոզալ ու տատանուել, որովհետեւ նրա յետեկոց սկսում էին բարձրանալ ոստայնի վրայով և ուրիշ տառապեալներ։ Կանդաթան վախեցաւ. նա տեսաւ ոստայնի բարակութիւնը և նկատեց, որ նա ձգում է աւելացած ծանրութիւնից. Բայց ոստայնը գեռ պահում էր նրան։ Կանդաթան մինչ այդ միայն վերի էր նայում, իսկ այժմ նա ներքի նայեց և տեսաւ, որ իր յետեկոց բարձրանում էր դժոխքի բնակիչների անհամար բազմութիւնը։ «Ի՞նչպէս կարող է վիմանալ այս բարակ թե՛լը բռլոր այդ մարդկանց ծանրութեանը», մտածեց նա և վախեցած՝ բարձրածայն գոչեց. «Թողէր ոստայնը, նա ի՞մն է։» Եւ յանկարծ ոստայնը կտրուեց, և Կանդաթան յետ վայր ընկաւ դժոխքը։ Անձնականութեան մոլորութիւնը գեռ ապրում էր Կանդաթայի մէջ։ Նա չը գիտէր անկիզծօրէն վերի ձգտելու հրաշալի ոյժը՝ արդարութեան ճանապարհի վրայ գուրս զալու համար։ Այդ ձգտումը նուրբ է, ինչպէս ոստայնը, բայց նա բարձրացնում է միլիօնաւոր մարդկանց, և որքան աւելի շատ մարդիկ բարձրանան ոստայնի վրայով, այնքան

առելի լժելի կր լինի նրանցից խրաբանշխրի համար: Բայց հէնց որ մարդու մէջ միաք կը ծագէ, թէ այդ սստայնը իմն է, թէ արգարութեան բարիքը միմիան իմն է պատկանում և թող ոչ ոք չը բաժանէ այն իմն հետ, այն ժամանակ թելը կտրում է, և զու ընկնում ես յետ առանձին էռթեան առաջուայ վիճակի մէջ, իսկ էռթեան առանձնութիւնը անէծը է, բայց միութիւնը՝ օրհնութիւն: Ի՞նչ բան է գժոխը: Գժոխը ուրիշ բան չէ, այլ եթէ ինքնասիրութիւնը, իսկ նիրվանան՝ ընդհանուր կեանին է...:

— Տուէք ինձ բռնել սստայնից, — ասաց մեռնող առագակապետը, երբ վանականը վերջացրեց իր պատմութիւնը, — և ես գուրս կը զամ գժոխը անգունդից:

Մազադութան մի բանի բռպէ լռութեան մէջ մնաց, հաւաքելով մաքերը, յետոյ շարունակեց:

— Լսեցք ինձ, ես ձեզ խոստովանում եմ: Կուշամբեցի ակնագործ գանդուի մօտ ես ծառայ էի: Բայց նրա ինձ անարդար կերպով խոշտանգելուց յետոյ, ես նրանից փախայ գարձայ առագակապետ: Մի բանի ժամանակ գարձայ առագակապետ:

առաջ ես իմ տեղեկարերներից խմացայ, որ նա անցնելու է լիոների միջով, և կողոպատեցի նրան, խլեցի նրանից իր կարողութեան միծ մասը: Գնացէք այժմ նրա մօտ և ասացէք, որ ես իմ բոլոր սրտով ներել եմ նրան այն վիրատրանքի համար, որ հասցըրել էր ինձ անարդար կերպով, և խնդրում եմ նրան ներել ինձ, որ ես կողոպատել եմ նրան: Երբ միասին էինք ապրում, նրա սիրաը քարի պէս կարծր էր, և ես նրանից սովորեցի ինքնասիրութիւնը: Լսել եմ, որ նա այժմ բարեհսպի մարդ է գարձել և նրան մատնանշում են իրին բարութեան ու արգարտսիրութեան օրինակ: Ես չեմ ուզում նրան պարտական մնալ, այդ պատճառով նրան ասացէք, որ ես պահել եմ ոսկեայ թապը, որ նա թափառի համար էր շինել, և բոլոր նրա զանձերը և թագցրել մի գետնափոր ալիք մէջ: Երկու աւագակ միայն զիտելին այդ տեղը, նրանք ել այժմ մեռած են. Թող Գանգուն իրա հետ զինուած մարդիկ վերցնէ ու զնայ այնտեղ յետ տունելու իր սեփականութիւնը, որից զրկել էի նրան:

Գրանից յետոյ Մազադութան պատմեց,

թէ նրտեղ էր այրը, և մեռաւ Պանտակի ձեռ-  
քերում:

Երիտասարդ վանականը Կօլշամբի վերա-  
դպոնակուն պէս, գնաց ակնազործի մօտ և պատ-  
մեց բոլորը, ինչ որ պատահել էր անտառում:

Պանդուն զինուած մարդկանցով գնաց  
գետնափոր այրը և այն տեղից վերցրեց բոլոր  
զանձերը, որ աւազակապետը թագյրել էր նրա-  
նում: Եւ նրանք պատով թագյցին աւազակա-  
պետին ու նրա սպանուած ընկերներին, և  
Պանտական վերեղմանի վրայ, Յուզդայի խօս-  
րերի մասին խորհրդածելով, ասաց հետեւալը:

«Անձնականութիւնը չար է գործում, անձ-  
նականութիւնն էլ տառապում է նրանից:»

«Անձնականութիւնը հեռու է մնում չարից, «  
և անձնականութիւնը մաքրում է:»

«Մաքրութիւնն ու անմաքրութիւնը պատ-  
կանում են իրան անձնականութեան: ոչ որ չէ  
կարող մաքրել ուրիշին:»

«Մաքրս ինքը պէտք է ճիգ թափէ. Յուզ-  
դան միայն քարոզիչ է:»

«Մեր Կարման», ասաց դարձեալ վանականը,  
«Ճիւարայի, Բրամայի, Կողքայի կամ աստուած-

ներից որ և է մէկի արտազրութիւնը չէ, — մեր  
Կարման հետևաներն է մեր արարքների:»

«Իմ գործունէութիւնը արգանդ է, որ կրում  
է ինձ. Ժառանգութիւն է, որ հասնում է ինձ.  
անձքը է իմ չար գործերի և օրհնովթիւն՝ իմ  
արդարութեան: Իմ գործունէութիւնը մի միակ  
միջոցն է իմ փրկութեան»:

Պանդուն յետ բերեց Կօլշամբի իր բոլոր  
զանձերը, և չափաւոր կերպով օգտուելով այնքան  
անսպասելիօրէն վերաբարձուած իր հարստու-  
թեամբ, նա հանդիսաւ ու ելքանիկ ապրեց իր  
մնացեալ կեանքը, և երբ նա մեռնում էր խոր-  
ծերութեան մէջ և նրա բոլոր տղաները, աղ-  
ջիկներն ու թոռները հաւաքուել էին նրա շուրջը,  
ասաց նրանց:

— Սիրելի զաւակներս, մի զատապարտէք  
ուրիշներին ձեր անյաջոզութիւնների մէջ:  
Որոնեցէք ձեր թշուառութիւնների պատճառը  
ինքներդ ձեր մէջ: Եւ եթէ զուք մնափառու-  
թեամբ կուրացած չէք, կը զտնէք այդ պատ-  
ճառը, և զտնելով այն, զուք կարող կը լինէք  
ազատուել չարից: Զեր թշուառութիւնների

ճարը ձեր անձերի մէջ է: Թող ձեր մտաւոք  
տեսութիւնը չը ծածկուի Մայեալի քօղով...:  
Յիշէցէք այն խօսքերը, որոնք իմ կեանքի թւ-  
լիսմանն էին.

«Ով որ ուրիշին ցաւ է պատճառում, իրան  
է չար գործում:

«Ով որ օվնում է ուրիշին, իրան է օվնում:

«Թող անհետանայ անհնականութեան  
պատրանքը — և զուք ոտ կը դնէք արդարու-  
թեան ճանապարհի վրայ»:



## ՆԱՄԱԿ ԿԱՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ\*)

Գուք ինձ հարցնում էք բուզգայական «կար-  
մա» հասկացողութեան մասին:

Քնի մէջ մենք ապրում ենք համարեա  
ճիշտ այնպէս, ինչպէս արթուն ժամանակիր:  
Պատկան առում է կարծես այսպէս. «Եթէ քնի  
մէջ մենք մեզ տեսնէինք շարունակ մինոյն  
պատթեան մէջ, իսկ արթուն ժամանակ զանա-  
պան, ապա քունը մենք կը համարէինք իրակա-  
նութիւն, իսկ իրականութիւնը՝ քոն»: Գտ ոչ

\*) «Կարմա» — գա՞ ինչպէս յայտնի է՝ բուզ-  
գայական մի հաւատալիք է հատուցման մասին,  
որ սերտ կազ ունի հոգեփոխութեան վար-  
պապիտութեան հետ: Ամեն մի կենդանի էակ  
կազմում է մի ամբողջ շարք փափոխումների

բոլորովին ուղիղ է: Իրականութիւնը տարբեր-  
ում է քնից նրանով, որ նա աւելի իրական է,  
աւելի խսկական է: Եյնպէս որ ես կառելի այս-  
պէս. եթէ մենք չը գիտենայինք քնից աւելի  
իրական կեանք, ասլա քունը մենք կը համա-  
րէնք լիովին կեանք, և երբէք չէնք տարա-  
կուսի՝ թէ նա խսկական կեանք չէ:

Այժմ մեր ամբողջ կեանքը՝ ծնունդից մինչև  
մահը՝ իր քներով միշտին արդեօք իր հերթին  
քուն չէ, որը մենք ընդունում ենք իրը իրական  
կեանք և որի իրականութեանը չենք կասկածում  
միայն նրա համար, որ մենք չը գիտենք ուրիշ՝  
աւելի իրական կեանք: Ես ոչ միայն կարծում,  
այլ համոզուած եմ որ այդ այդպէս է:

Ի՞նչպէս քունը այս կեանքում մի այնպիսի  
փիճակ է, որի միջոցին մենք ապրում ենք կառաջով,  
նախընթաց կեանքի տպաւորութիւններով, մըտ-  
քերով, զգացումներով, ճիշտ այնպէս էլ մեր

արդիւնք: Ուրան առաքինի է եղել մեր կեանքը  
անցեալում, այնքան աւելի ենք մօտենում մենք  
բարոյական կատարելութեան՝ ներկայում և ապա-  
գայում: «Կարմա»յի վարդապետութիւնը սերտ  
կապ ունի ժամանակակից քնախոսների ժառան-  
գականութեան ուսմունքի հետ, որի գորու-

այժմեան կեանքը մի այնպիսի վիճակ է, որի  
միջոցին մենք ապրում ենք կառաջով, որ  
առաջընթացն է աւելի իրական կեանքի, և որի  
միջոցին մենք ոյժ ենք հաւաքում, կարմա ենք  
մշակում հետեւալ այն աւելի իրական կեանքի  
համար, որից գուրս ենք եկել: Իհչպէս որ մենք  
հազարաւոր քներ ենք ապրում մեր այս կեան-  
քում, այնպէս էլ մեր այս կեանքը մէկն է հա-  
զարաւոր այնպիսի կեանքերից, որոնց մէջ  
մտնում ենք այն աւելի իրական, խսկական, բուն  
կեանքից, որից մենք գուրս ենք գալիս՝ մտնելով  
այս կեանքը, և վերապահում ենք՝ մեռնելով:  
Մեր կեանքը այն աւելի խսկական կեանքի  
քներից մէկն է, և այդպէս շարունակաբար,  
մինչև անվախճանութիւն, մինչև մի վերջին,  
բուն կեանքը — Աստծու կեանքը: Աշխարհի  
մասին առաջին զարավարների ծնունդն ու  
երեսումը — դա ննջելն է և ամենաքաղցր բունը.  
թեամբ իրաքանչիւր անհատ արդիւնքն է իր  
նախահայրերի առաքինութիւնների ու մոլու-  
թիւնների, և իր հերթին անոնչական կերպով  
ազգում է իր յետնորդների վրայ: Դա էլ իր  
տեսակի «կարմա» է, այսինքն հատուցման  
օբէնք: Յուզգայականների մօտ այդ վարդա-

մահը — զա արթնացումն է:

Կանխահաս մահը — զա մարդուն արթնացրել են, բայց նա քնից չէր կշտացել: Ծերունական մահը — զա երկար թել էր, բայց արգելով թոյլ էր քնում և ինքը զարթնեց: Անձնասպանութիւնը — զա մղձաւանջ է, որ ոչնչացնում ես նրանուվ, որ յիշում ես թէ քնած ես, ճիզ ես զործ գնում ու զարթնում ես: Միմիայն այս կեանքով ապրով, ուրիշ կեանքը շը նախազգացող մարդը — զա մի խոր քուն է առանց երազների, զա մի կիսակենդանային վիճակ է: Զգալ քնի մէջ այն, ինչ որ կատարում է շուրջդ, քնել զգայնօրին, աղատաստ լինել ամեն բավէ զարթնելու — զա զիտակցել է թէկուզ ագօտ կերպով այն միւս կեանքը, որից զուրս ես եկել, և գէպի որը գնում ես:

Քնի մէջ մարդը միշտ եսական է և ապրում է մենատկ, առանց ուրիշների մասնակցութեառութիւնը միայն աւելի բանաստեղծական ձեի մէջ է մտել: Մարդս աստիճանաբար կարող է բարձրանալ առարինութեան ճամբով մինչ աստուծանման վիճակի, մինչև երանութիւն, կամ ընդհակառակը, մոլութեան ճանապարհով իջնել մինչև կենդանական վիճակի և դժոխք

թեան, առանց նրանց հետ կապակցութեան: Այն կեանքում, որ մենք իրականաւթիւն ենք անուանում, ուրիշների հետ արգէն աւելի է կապը, արգէն կայ մերձաւորին սիրելու նմանող ինչ որ բան: Եսկ այն կեանքում, որից մենք գուրս ենք եկել և գէպի որը զնում ենք, այդ կապը աւելի սերտ է, սէրը աչ միայն արգէն ցանկալի մի բան է, այլ աւելի իրական: Այն կեանքում, որի համար և այդ կեանքն էլ է քսն, կապն ու սէրը էլ աւելի են, և այդ քնի մէջ մենք զգում ենք արգէն, թէ այնակ ինչ կարող է լինել, և կը լինի: Այդ բոլորի հիմքը մեր մէջ արգէն կայ և թափանցում է բոլոր քների միջով:

Կը ցանկանայի, որ զուք ինձ հասկանացիք, ես չէ թէ զուարձանում եմ, հնարին եմ. ես հաւատում եմ այդ բանին, տեսնում եմ առանց տարակոյսի, զիտեմ, որ ես՝ մեռնելով նետուել: Մարդկային հոգին անման է, մեռնելով, նա շաբանակ վերածնուռմ է, և արտաքին ձեր, որի մէջ նա մտնում է, իրանից ներկայացնում է անցողական մի աստիճան գէպի երանութիւն զիտակ, կամ ընդհակառակը, տանջանքների մէջ ընկնելու:

ուրախ պիտի լինեմ, որ կը հասնեմ այն՝ աւելի  
իրական աշխարհին:

L. Sołusoj.



## Ա Յ Դ Դ Ո Ւ Ե Ա

Գերմաներէնից

Բոնակալն իր մօտ կանչեց իմաստունին,  
հարցնելու համար թէ որն է թշնամոց վրէժ  
լուծելու ամենալաւ եղանակը:

Բոնակալը: Ասա ինձ ամենադաժան, եր-  
կարատն տանջանքը, որի միջոցով ես կարո-  
ղանամ չարշարել յանցապարտին մինչև մահը:

Իմաստունը: Ստիպիր նրան ճանաչել իր  
մեղքը և թնդ նրան իր խզմին:

Բոնակալը: Ուզիմն, քո ասածով, խիզ  
կայ: Լսիր. իմ ազգականը շատ խիստ անպատ-  
ուեց ինձ, և ես չեմ կարող զարձեալ ուրախ  
ու հանդիստ լինել, մինչի որ վրէժո չառնեմ:  
Ես մտածում էի ամենադաժան տանջանքների  
մասին և չը գտայ այնպիսիները, որոնք համա-  
պատասխան լինէին իմ բարկութեան:

Իմաստունը: Դու այդպիսիները չեն էլ կանի, որովհետեւ ոչ մի տանջանքով գու շես կարող ոչիշացնել ոչ յանցագործութիւնն ինքը, ոչ էլ զորդողին: Այդ պատճառով՝ մի բան է խելացի, ներել:

Բոհակալը: Ես զիտեմ, որ չեմ կարող անել այն, որ եղածը չը լինէր, բայց ինչու ես առում, թէ ես չեմ կարող յանցագործութիւնը ոչիշացնել:

Իմաստունը: Ոչ ոք չէ կարող անել այդ:

Բոհակալը: Ի՞նչ զատարկ բան ես ու ուում: Ահա ես կարող եմ այն իսկոյն ոչիշացնել այնպէս, ինչպէս ոչիշացնում եմ ահա այս լամպը, որ էլ երբ' ը չէ լուսաւորելու:

Իմաստունը: Լամպը գու ոչիշացրիր, բայց ոչ լոյսը, որովհետեւ լոյսը ամեն տեղ, որտեղ վառում է, միշտ միևնոյն լոյսն է և գոյաթիւն ունի ինըն իրանից ամեն բանում: Դու չես կարող սպանել յանցագործին, որովհետեւ գու հենց նա ես, որին կուգէիր սպանել:

Բոհակալը: Դու կամ խելագար ես, կամ կտտակախօս:

Իմաստունը: Ես ճշմարտութիւնն եմ ա-

սում, յանցագործը՝ այդ գու ինք ես

Բոհակալը: Ուզեմն ես ինքս՝ ի՞նձ անցպատւեցի և պէտքէ լինքս ինձ ոչիշացնեմ, վիրաւորանքը քաւելու համար:

Իմաստունը: Ամեննին, ոչ մի շարիք չէ կարող արիւնիելութեամբ քաւուել, քեզ հասած վիրաւորանքը քաւելու համար, գու պիտի պարտաւուելիք ամբողջ մարդկաւթիւնը ոչիշացնել, որովհետեւ մեզաւորը նա է: Բայց և այն ժամանակ էլ կը մնար այն, ինչ որ քեզ անցպատւում է, որովհետեւ, ինչպէս ինք ճիշտ առացիք, չէ կարելի անել այն, որ եղածը չը լինէր:

Բոհակալը: Որքան էլ րո խօսքերը տարօրինակ են, բայց Նրանցում ճշմարտութեան մի բաժին կայ: Աւելի պարզ խօսիք:

Իմաստունը: Նայիր չորս կովմդ այն ամենի վրայ, որ կենդանութիւն ունի, և ասա ինք քեզ. «Եյդ ամենը ես եմ»: Բոլոր մարդիկ եղայլներ են, այսինքն բոլոր մարդիկ ըստ իրանց էութեան միևնոյն մարդն են: Բարձրագոյն արդարաւթեան առաջ չը կայ շարիք, որ պատժուած չը լինէր: Երբ գու ձեռք ես բարձրա-

յընում քո թշնամու վրայ, դու ինք քեզ ես  
խփում, որովհետեւ վիրաւորող ու վիրաւորուսդ  
ըստ էութեան միևնոյնն են:

Բոնակալլյ: Ես քեզ չեմ հասկանում: Ես  
ուրախանում եմ այն տառապանքների համար,  
որ պատճառում եմ թշնամու: Միթէ կարող  
էր այդ լինել, եթէ ես և նա միևնոյնը լինէինք:

Իմաստունը: Ուրախանում ես դու այն  
տառապանքներով, որ պատճառում ես թըշ-  
նամուգ, և չես դում այդ տառապանքները նրա  
համար, որ դու կաշկանդուած ես քո վրիժա-  
ռու, երեակայական անձնական «ես»ի պատրան-  
քով. բայց քո իսկական «ես»ի գիտակցական  
դարթնումով, դու էլ պիտի դգաս նրա բոլոր  
տառապանքները:

Բոնակալլյ: Գրանք նման են անմիտ խօս-  
քերի: Արա այնպէս, որ զգամ, թէ ես ու յան-  
ցագործը մէկ ենք:

Իմաստունը: Գծուար է անել քո ցան-  
կացածը, բայց ես կը ջանամ: Ես քեզ այժմ մի  
այնպիսի վիճակի մէջ կը գնեմ, որ դու կը զգաս  
մարդկութեան միութիւնը բոլոր մարդկանց մէջ:  
Եւ իմաստունը, որ այդ լնդունակութիւնն

ունէր, առաջ բերեց բոնակալի հոգու մէջ բո-  
լոր այն տպաւորութիւններն ու զգացումները,  
որոնց հետեանկով նրա թշնամին վիրաւորանք  
էր հասցրել նրան: Այդ վիճակսւմ բոնակալն  
իրան լնդունեց իբր այն մարդը, որին ատում  
էր, և նրան պարզուեցին այն գրդումները,  
որոնց հետեանկով էր վարուել իր թշնամին:  
Այդ տեսակէտով նա հիմք չը կարողացաւ գտնել  
նրան ատելու համար, որովհետեւ հասկացաւ, որ  
անձնականութիւնը մարդու խսկական էստիւնը  
չէ, այլ թէ ամբողջ մարդկութեան միութեան  
գիտակցութիւնն է հիմքը բոլոր անձնականու-  
թիւնների, որոնք արտայայտում են զանազան  
աստիճանների մէջ:

Բոնակալլյ երբ վերադարձաւ իր առա-  
ջուայ վիճակին, հետեւել հարցը տուեց իմաստու-  
նին:

Բոնակալլյ: Ասեմ քեզ, թէ ես այժմ ինչ  
իմացայ:

Իմաստունը: Ասա:

Բոնակալլյ: Ես տեսայ ճշմարտութիւնը  
կարծես քովի միջով և խմացայ, որ այդ  
քովի յետեւ մարդկութիւնն ամբողջ կազմում է

մի էութիւն, և իս թշնամիներն ու բարեկամ-ները նրա անդամներն են, ինչպէս գու և ես: Ով որ վիրաւորանք է հասցեում մարդուն, նա վիրաւորում է և մեղ և ամբողջ մարդկութիւնը:

Իմաստունը: Դա այն ճշմարտութիւնն է, որ ես քեզ ներչնչել եի ուզում և սր արտայայտում է հետեւեալ խօսքերով. այդ դռ եւ:

Բոնակաղը: Հապա ի՞նչպէս ապրել դրանից յևոյ աշխարհում:

Իմաստունը: Մշակը ծառայում է, վաճառականն առուտուր է անում, գինուորը պետութիւնն է պաշտպանում, իշխանը կառավարում է: Ամեն ոք իրան յատուկ գործունէութեան շրջանն ունի: Բայց լուսաւորուած մարդը դրա հետ ընդհանուր ոչինչ չունի. այն, ինչ ոք ուրիշների համար կազմում է բարձր առաքինութիւն, լուսաւորուած մարդու համար կը լինէր յանցանք ու անմտութիւն: Այժմ գու լուսաւորուեցիր, գու տեսար այժմ՝ այն լոյսի ճառապայթը, որ լուսաւորում է ամենքին, բայց լինգուեւում է միայն քիչերից, և գու այլ ևս չես կարող վիրապառնալ մթութեան:

Բոնակաղը: Օգնիր ինձ գտնելու մարտր

լոյսը: Ես չեմ ուզում լինել «ես», չեմ ուզում ցանկանալ ոչ մի անցողական բան, ուզում եմ լինել անժամանակաւոր, անահանական, ինչպէս և գու....

Բոնակաղը դրանից յետոյ շուտով իր թշ-նամու հետ հաշտուեց, ճանաշեց կեանքի կո-չումն ու նպատակը և գնաց այն ճանապարհով, որ տանում է դէսի յաւիտենական խաղաղութիւն:



# Մ Տ Գ Ե Ռ

Զարդարիր ամեն մի անցնող օրը մի բարի  
գործով:

Եթէ բարի գործը մի զրդապատճառ ունի,  
նա արդէն բարիք չէ. Եթէ նրա հետևանքը  
վարձատրութիւնն է, նոյնպէս բարիք չէ: Բա-  
րիքը պատճառների ու հետեանքների շղթայից  
գործ է:

Բարութիւնը զարդարում է կեանքը, վճռե-  
լով բոլոր հակասութիւնները. Խճռուածը դար-  
ձնում է պարզ, դժուարը՝ թեթև, մուայլը՝ ուրախ:

Բարութիւնը հոգու համար նոյնն է, ինչ  
որ մարմնի համար առողջութիւնը. նա աննկա-  
տելի է, երբ տէր հս նրան, և յաջողութիւնն է  
տալիս ամեն մի գործում:

Իր բարի կեանքի զիտակցութիւնը բաւա-  
կանաշափ վարձատրութիւնն է այդ կեանքի  
համար:

Սովորիր բարի գործելու ուրախութեան:  
Բարիք արա թարուն, և կարմրիր երբ նրա  
մասին իմանան:

Բարութիւնը ոչ միայն առաքինութիւնն և  
ուրախութիւնն է, այլ և կռուելու գինք:

Դժուար է բարի լինել արատաւոր, սոտ-  
խօս մարդու հետ, մահաւանդ այնպիսու հետ,  
որ վիրաւորում է ձեզ, բայց հինգ նրա հետ էլ  
պէտք է լինել բարի թէ նրա համար և թէ իր  
անձի համար:

Բարութիւն կեղծելուց աւելի վատ ըան ըլ  
կայ: Բարութեան կեղծումը աւելի է յետ մզում,  
քան անկեղծ շարութիւնը:

Կայ բնածին բարութիւն, որ արտարին ու  
մարմնաւոր պատճառներից է կախուած,—Ժա-  
ռանգականութիւնից, լաւ մարսողութիւնից, յա-  
ջողութիւնից: Այդ բարութիւնը շատ հաճելի է

թէ զգացողի և թէ ուրիշ մարդկանց համար: Եւ կայ բարութիւն, որ առաջանում է հոգեկան, ներքին աշխատանքից: Այդպիսի բարութիւնը նուազ գրաւիչ է, բայց սա կայ, որ առաջինը կարող է ոչ միայն անհետանալ, այլ և փոխուել շարութեան, իսկ երկրորդը ոչ միայն երթէ չէ անհետանում, այլ շարունակ աճում է:

---

Կատարուած բարիքը ուրախացնում է, բայց չէ գոհացնում. միշտ թւում է թէ պէտք եր աւելին անել:

---

Մարդկանց և առհասարակ կենդանի էակ-ներին ծառայելու մէջ ուրախութիւն գտնելու համար՝ նախ և առաջ պէտք է վարժուել շար չը զործել մարդկանց ու կենդանի արարածներին, իր կեանքը չը կառուցանել ուրիշների տառապանքների ու կեանքի վրայ:

---

Բարութիւնը, հոգու հիմնական յատկութիւնն է: Եթէ մարդս բարի չէ, ապա նա ենթարկուել մի որ և է խարէութեան, գայթակութեան, կրքի, որոնք խանդարել են նրա այդ բնական յատկութիւնը:

Մարդու իսկական կեանքը մարմնի մէջ չէ, այլ հոգու: Ճատ մարդիկ այդ չը զիտեն: Եւ երբ մարդիկ այդ չը զիտեն, նրանք միշտ վախենում են այն բոլորից, ինչ որ կարող է վնասել նրանց մարմնին. ամենից աւելի վախենում են մահից: Իսկ երբ մարդս զիտէ, թէ նրա կեանքը հոգու մէջ է, նա արգէն վախենալու բան չունի, որովհետեւ ոչինչ ու ոչ որ, բայց իրանից' չէ կարող նրան վնասել:

Քեզանում, միայն քեզանում են և արքայութեան բոլոր ուրախութիւնները, և զժոխրի բոլոր տանջանքները: Արա այն, ինչ ուզում է քեզանից ըստ մարմնինք. աշխատիլ համնելու վառքի, պատիւների, հարստութեան, և քուեանքը պիտի լինի դժոխք: Արա այն, ինչ ուզում է քու հոգին. ջանիր արա ձեռք բերելու հեղութիւն, զժասրատութիւն, սէր, և քեզ հարկաւոր չը պիտի լինի ոչ մի արքայութիւն: Արքայութիւնը ըստ հոգու մէջ կը լինի:

Այն, որ ինձանում մարմնաւոր չէ, ես անուտնում եմ հոգի: Այն, որ ամբողջ աշխարհում մարմնաւոր չէ, ես անուանում եմ Աստուած:

Աստծու կամքը նրանումն է, որ լաւ լինի  
նշ միայն ինձ, այլ ամենքին: Իսկ ամենքին լաւ  
լինելու համար՝ կայ միայն մէկ միջոց. այն՝ որ  
ամենքն էլ բարիք ցանկանան ոչ իրանց, այլ  
միմիանց:

Եթէ հարցուի մարդուն՝ թէ ով է նա, ոչ  
մի մարդ չէ կարող ուրիշ բան պատասխանել,  
բայց միայն՝ թէ ես—ես եմ: Իսկ եթէ բոլոր  
մարդիկ ես են, ապա այդ «ես»ը ամենքի մէջ  
էլ միևնույնն է: Ազգակս էլ է:

Եթէ ես միայն ինձ եմ բարի ցանկանում,  
ապա կարող եմ չար ցանկանալ ուրիշ մարդկանց.  
Եթէ միայն իմ ընտանիքին բարի եմ ցանկանում,  
ապա կարող եմ չար ցանկանալ ուրիշ ընտանիք-  
ների. Եթէ միայն իմ ազգին եմ բարի ցանկա-  
նում, ապա կարող եմ չար ցանկանալ միւս  
ազգերին: Միայն երբ ես բարի եմ ցանկանում  
բոլոր մարդկանց, ես չեմ կարող և չը պիտի ոչ  
որի չար ցանկանամ:

Երբ մենք սիրում ենք բոլոր մարդկանց, մեր  
հոգին մի առանձին հրճուանիք է զգում, և մենք

ոչնչից չենք վախենում, ոչինչ չենք ցանկանում:  
Ինչից է այդ: Նրանից, որ սէրը—Աստծուծ է:  
Եւ սիրելով՝ մենք միանում ենք թէ նրա հետ  
և թէ աշխարհում կենդանութիւն ունեցող ա-  
մեն բանի հետ: Իսկ ի՞նչ ցանկանալ ու ինչից  
վախենալ, երբ մենք Աստծու և ամբողջ աշ-  
խարհի հետ մի ենք:

Զանք արա սիրել նրան որին չէիր սիրում,  
զատապարտում էիր, ով քեզ վիրաւորանք է  
հասցրել: Եւ եթէ այդ յաջողուի քեզ անել, գու-  
կունենաս մի նոր ուրախալի զգացում: Ինչպէս  
որ լոյսը աւելի պայծառ է լուսաւորում մթու-  
թիւնից յետոյ, այնպէս էլ ազատուելով ան-  
սիրելութիւնից՝ սիրոյ լոյսը աւելի ուժեղ ու  
բերկալի կը բոցավառուի քեզանում:

Մի հոգաք որ ուրիշները ձեզ սիրեն: Մի-  
րեցք և ձեզ պիտի սիրեն:

Չէ կարելի անմեղանչական լինել, բայց  
կարելի է տարէց տարի, ամսէ ամխու և օրէցօր  
զառնալ աւելի պակաս մեղանչական: Ահա այդ  
հետզհետէ աւելի պակաս մեղանչական դառնալու

մէջն է և իսկական կեանքը և ճշմարիտ բարիքը  
իւրաքանչիւր մարդու:

Վատ է, եթէ մարդ կարծում է թէ մեղքեր  
չոնի, որով և իրա վրայ աշխատելու պատճառ  
չը կայ: Բայց վատ է նոյնալէս, երբ մարդ  
կարծում է թէ նա ծնուել է ամբողջավին մեղ-  
քերի մէջ և մեղքերի մէջ էլ կը մեռնէ, ուստի  
և իրա վրայ աշխատելը զուր է:

Պէտք է յիշել ու հասկանալ՝ թէ մեղքերը  
միշտ կան և թէ պէտք է միշտ նրանց հետ  
մարտել:

Եթէ վարակուել ես մի որ և է կրօռվ,  
յիշիր որ այդ կիրքը քո հոգին չէ, այլ բոլորս-  
վին նրան հակառակ մի բան, որ ծածկում է  
քեզանից քո իսկական հոգին, և որ կարող ես  
դու նրանից ազատուել:

Եթէ մարդիկ չը հնարէն իրանց համար  
ճոխ բնակարաններ, հազուսաններ, կերակուրներ,  
բոլոր կարօտեանները կարսղ կը լինէին այժմ  
ապրել առանց կարիքի, իսկ հարուստները,  
առանց երկիւղի իրանց ու իրանց հարստու-

թեան համար և առանց ազքատների ատելու-  
թեան:

Եթէ սի մարդ կարսղ է վճռել, թէ շատերի  
բարիքի համար պէտք է չարիք անել մի ուրիշնին,  
այդ ուրիշն էլ կարող է ճիշտ նոյնալէս վճռել  
թէ շատերի բարիքի համար պէտք է չարիք  
անել այն առաջնին, և այդպէս ամենիքն էլ պիսարի  
շարիք գործեն միմիանց և իրանց իրաւացի  
համարեն, — հէնց նոյն բանը, ինչ որ լինում է  
այժմ մեր աշխարհում:

Խղճալի է այն մարդը, երբ մերկ է, մըր-  
սում է, քաղցած. բայց նրան անզամ աւելի  
պէտք է խղճալ այն մարդուն, որ խարեբայ է,  
արբեցող, զոկ, կողոպտիչ, սպանող: Առաջնորդ  
տառապում է մարմնով, իսկ երկրորդը նրանով,  
որ ամենաաթանկապինն է աշխարհումն հոգով:

Լաւ է խղճալ ազքատին և օգնել նրան,  
բայց ամենից լաւն է չը գատապարտել փշացածին  
այլ խղճալ նրան ու օգնել:

Մարդու իսկական «ես»ը հոգեկան է: Եւ  
այդ «ես»ը մէկ է ամենիքի մէջ: Ուրիմն ի՞նչպէս

կարող են մարդիկ իրար մէջ անհաւասար լինել:

Սիրել՝ առհասարակ նշանակում է բարի գործել: Այդպէս ենք հասկանում ամենից էլ և չենք կարող այլապէս հասկանալ սէրը:

Եւ սէրը միայն խօսք չէ, այլ գործունէութիւն է, ուզուած ուրիշների բարիքին:

Եթէ մարդս վճռում է թէ իրան աւելի լաւ է հեռու մնալ ներկայի ամենափոքր սիրոյ պահանջումներից, յանուն մի այլ աւելի մեծ սիրոյ յետազայ արտայալտումին, ապա նա խաբում է կամ իրան և կամ ուրիշներին, և ոչ ոքի չէ սիրում, բայց միայն իրանից:

Սպազայի սէր չէ լինում, սէրը ներկայի գործունէութիւնն է: Եսկ այն մարդը, որ երկան չէ հանում իր սէրը ներկայում, նա սէր չունի:

Պահուեցէք այն դժբախտից, որին օդնում էք. թող նա վայելէ բարեզործութիւնը, առանց գիտենալու իր բարեբարի անունը:

Օգնեցէք ազբատին՝ առանց նրա չբաւորութեան պատճառներն իմանալ ջանալու, որպէս զի չը յայտնուի այնպիսի մի բան, որ կարող

է ձեր կարեկցութիւնը թուլացնել:

Առանց սիրոյ ոչ մի գործ օգուտ չի բերի, և ամեն մի գործ՝ սիրուց ներշնչուած, որքան էլ փոքր ու չնշին երեխ, առատ պառզ կը բերէ:

Մարդկանց մէջ սիրոյ մեծացումը միայն կարող է փոխել գոյութիւն ունեցող հասարակարպը:

Եակներն իրար ոչնչացնում են, բայց միենոյն ժամանակ սիրում ու օգնում են միմիանց:

Կեանը պահպանուում է ոչ թէ քանդելու տենչանքով, այլ փոխազարձ օգնութեան զգացումով, որ մեր սրտի լեզուակ սէր է կոչում:

Ես որքան կարող եմ տեսնել աշխարհի կեանքի զարգացումը, տեսնում եմ նրանում միայն փոխազարձ օգնութեան այդ սկզբունքի արտայալտութիւնը: Ամբողջ պատմութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ բոլոր Եակների փոխազարձ համաձայնութեան միակ սկզբունքի հետըդ-հետէ աւելի յստակօրէն երեան գալը:

Համաձայնութեան, ներման ու սիրոյ ժամանակը, որ պէտք է փոխարինէ երկպառակու-

թեան ու ատելութեան ժամանակին, չէ կարող  
չը հասնել, որովհետև մարդկի արգելի գիտեն,  
և անտարակոյս գիտեն՝ թէ ատելութիւնը կորըս-  
տաբեր շարիք է ինչպէս հոգու նոյնալէս և  
մարմնի համար, ինչպէս անձի՛ նոյնալէս և հասա-  
րակութեան համար, և թէ սէրը տալիս է և  
ներքին և արտաքին բարիք՝ թէ՛ իւրաքանչիւրին,  
թէ բոլոր մարդկանց։ Այդ ժամանակը մօտենում  
է։ Մեզանից է կախուած անելու այն բոլոր՝  
ինչ որ կը մօտեցնէ և հեռու կենալու այն բա-  
նից, որ հեռացնում է այդ ժամանակի դաշտստը։

Ով որ գէմ մի անդամ՝ շարիքը բարիքով  
հատուցանելու ուրախութիւնն զգացել է, նա  
արգելի երբէք առիթը չի փախցնի այդ ուրախու-  
թիւնը կրկին ստանալու։



*Տառապ*

ՀՀ Ազգային գրադարան



NL0327245

14.081



Գինն է 15 ԿՈՊԵԿ